

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՍԵՐՈՒՅԵ ԱՅԵՐԵՄԻԱՆ

(Handwritten signature)



10-ը հո

Կարծիք

Անի Սարգսի Հարությունյանի «Կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլում (հայերենի գուգադրությամբ)» Ժ. 02. 07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկա ատենախոսությունը ուսումնասիրում է կենդանիներով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան քաղաքական և տնտեսական լրագրային հոդվածներում՝ հայ մամուլից բերված կենդանուններով փոխաբերական արտահայտությունների հետ գուգադրությամբ:

Ատենախոսը իր առջև դրել է խնդիր՝ հիմնավորել կենդանուններով փոխաբերությունների ներուժը՝ քաղաքական և տնտեսական խոսույթներում:

Աշխատանքն արդիական է, քանի որ քաղաքական և տնտեսական խոսույթներում փոխաբերությունները դիտվում են որպես ճանաչողական գործիք, որը դեռևս բավարար չի ուսումնասիրվել և սակավաթիվ են կենդանուններով փոխաբերությունների գործածության վերաբերյալ հետազոտական աշխատանքները ճանաչողական լեզվաբանության ոլորտում: Այս պատճառով դժվարություններ են առաջանում քաղաքական և տնտեսական խոսույթներում՝ փոխաբերությունների մեկնության գործընթացում:

Գիտական նորույթը պայմանավորված է այն փաստով, որ առաջին անգամ փորձ է արվում վեր հանել կենդանուններով փոխաբերական կաղապարների վերլուծությունը լեզվաճանաչողական հայեցակերպի լույսի ներքո, որի շրջանակ-

ներում հնարավորություն է ստեղծվում լրամշակելու և ուսումնասիրելու քաղաքական և տնտեսական խոսույթների առանձնահատկությունները:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից իրենց համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության, բառարանների և էլեկտրոնային լրատվամիջոցների ցանկից:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Փոխաբերության ճանաչողական հայեցակերպը», բաղկացած է չորս ենթագլուխից, որտեղ ներկայացված են ճանաչողական լեզվաբանության մեջ փոխաբերության տեսական հայեցակերպի զարգացման հիմնական միտումները: Ատենախոսության այս մասում քննության են սուղվում փոխաբերական արտապատկերման գործընթացում պատկեր-սխեմաների առանձնահատկությունները: Տեսականորեն ներկայացվում է կենդանուններով փոխաբերությունների լեզվամշակութային առանձնահատկությունները ուսումնասիրվող լեզվամշակույթներում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Կենդանուններով փոխաբերական կաղապարների առանձնահատկությունները անգլաամերիկյան քաղաքական խոսույթում», կազմված է երեք ենթագլուխից, որտեղ ուսումնասիրվում են կենդանուններով փոխաբերությունների առանձնահատկությունները լրագրային քաղաքական խոսույթում: Կենդանուններով փոխաբերությունները դիտվում են որպես հասարակական և քաղաքական իրականության ձևավորման կարևորագույն գործոն: Առանձնացվում են փոխաբերական միավորների կազմավորման ոլորտները և հիմնական աղբյուր-տիրույթները:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Կենդանուններով փոխաբերական կաղապարների առանձնահատկությունները անգլաամերիկյան տնտեսական խոսույթում», ունի երեք ենթագլուխ, որտեղ կենդանուններով փոխաբերությունների առանձնահատկությունները քննվում են տնտեսական լրագրային խոսույթում: Ընդգծվում է նաև տնտեսության և քաղաքականության սերտ փոխկապակցվածությունը և փոխաբերական կաղապարների յուրահատկությունները ուսումնասիրվող տիրույթներում:

Հարկ է նշել, որ ատենախոսը կատարել է բավականին մեծ աշխատանք կենդանուններով փոխաբերությունների ուսումնասիրության ոլորտում՝ կարևորելով դրանում փոխաբերական կաղապարների դերը: Ըստ ատենախոսի՝ կենդանուններով փոխաբերությունները քաղաքական և տնտեսական խոսույթներում մեխանիզմներ են, որոնք հնարավորություն են տալիս ընթռնել և մեկնաբանել տնտեսական մասնագիտական եզրերը:

Ուշադրության են արժանի աշխատանքում զետեղված աղյուսակներն ու գծապատկերները, որոնք օժանդակում են նյութի ընկալմանը և օրինակների քանակական վերլուծության յուրահատուկ դրսևորում են:

Ատենախոսությունը հետաքրքիր է, աչքի է ընկնում վերլուծական նյութի ու տեսական եզրահանգումների հազեցածությամբ: Ակնհայտ է, որ ատենախոսը քաջատեղյակ է ուսումնասիրվող նյութին և նրան հաջողվել է համարժեք ներկայացնել կենդանուններով փոխաբերությունների հատկանիշները՝ ճանաչողական լեզվաբանության հարացույցում:

Այժմ սեղմ կանգ առնենք որոշ նկատառումների վրա, որոնք պայմանավորված են աշխատանքը առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ.

- Վերլուծելով «Ընտրությունները ձիարշավ է» փոխաբերական կաղապարի դրսևորումները անգլաամերիկյան մամուլում /էջ56-62/, ատենախոսը իրավացիորեն նշում է, որ անգլալեզու քաղսքական խոսույթում «...համեմատաբար մեծ տոկոս են զբաղեցնում «ձի» կենդանուն պարունակող փոխաբերությունները, և շատ հաճախ ընտրությունները համեմատում են ձիարշավների հետ»: Հեղինակը այս երևույթը հիմնականում կապում է այն փաստի հետ, որ երկուսն էլ /ընտրություններն ու ձիարշավը/ ունեն սկզբնակետ և վերջնակետ, հաղթողներ և պարտվողներ, և առաջացնում են համակրանք թեկնածուի հանդեպ /էջ 58/: Այնուհետև, շարունակելով վերլուծությունը հեղինակը դիտարկում է հայ քաղաքական խոսույթին բնորոշ փոխաբերություններ, նկատելով, որ մեզանում նման օրինակները առկա չեն: Կարծում ենք, այս հատվածը առավել խորքային կդիտվեր, եթե հեղինակը մեջբերում աներ

այն մասին, որ դարեր ի վեր անգլաամերիկյան մշակույթներում ձիարշավը սիրված և դիտարժան սպորտաձև է եղել, համարվել է ընտրյալների զբաղմունք և միշտ գտնվել է հասարակության ուշադրության կենտրոնում: Ակնհայտ է, որ այն ամրացած է այդ ժողովուրդների ճանաչողական համակարգում:

- Օրինակների խմբավորումը և վերլուծությունները առավել կանոնակարգված կլինեին, եթե հեղինակը համեմատություն և կայուն դարձվածներ պարունակող օրինակները առանձնացներ մեկ ենթազլխում և ներկայացներ դրանք որպես կենդանուններով փոխաբերությունների առանձնահատուկ դրսևորում, քանզի դրանց գործածումը տարբերվում է մյուս կենդանուններով փոխաբերությունների օրինակներից /օրինակ, to crow like a rooster - էջ 106, to stick one's head in the sand - էջ 107, ջայլամի պես զլուխը մտցնել հողի մեջ - էջ 107, նապաստակի պես փախչել - էջ 109 և այլն:

- Էջ 174-ում ատենախոսը անդրադարձ է կատարում տնտեսական խոսույթում կենդանունների տեսակային բազմազանությունը և փոխաբերությունների առավել մեծ թվով կիրառելիությանը և նշում մի քանի փաստարկներ: Այս փաստարկներին կարելի էր ավելացնել թերևս ամենակարևորներից մեկը՝ տնտեսական խոսույթում թիրախ/օբյեկտ է անշունչ առարկան՝ փողը, մինչդեռ քաղաքական տիրույթի օբյեկտներն են մարդիկ: Ըստ էության, անշունչ երևույթներին առավել հարմար է «կենդանացնել» փոխաբերությունների միջոցով՝ խոսքը առավել պատկերավոր դարձնելու նպատակով:

Եվ այնուհանդերձ, վերը նշվածն ամենևին չի նվազեցնում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները:

Հաշվի առնելով, որ քաղաքական և տնտեսական խոսույթները համարվում են ազդեցիկ համատեքստեր լեզվի ուսումնասիրության գործընթացում, ատենախոսության նյութը և արդյունքները կարող են հաջողությամբ կիրառվել


ճանաչողական լեզվաբանության մամուլի լեզվի և ոճագիտության մասնագիտական դասընթացներում:

Սեղմագրում ներկայացված դրույթները ևս համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Կարծում ենք, որ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈՀ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, և ատենախոս Անի Սարգսի Հարությունյանը արժանի է Ժ. 02. 07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 2 նիստում՝ Բ. Գ. Թ., դոցենտ Տ. Միքայելյանի, Բ. Գ. Թ., դոցենտ Գ. Մելիքյանի, Բ. Գ. Թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանի, Բ. Գ. Թ., դոցենտ Ս. Կարապետյանի և Բ. Գ. Թ., դոցենտ Ռ. Ասատրյանի մասնակցությամբ:


Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար



Բ. Գ. Թ., դոցենտ ԳՈՀԱՐ ՄԵԼԻՔՅԱՆ



Մելիքյանի ստորագրությունը հաստատում եմ՝



Բ. Գ. Թ., դոցենտ ՍԱՐԻԱՍ ԻՄՊԻՐՅԱՆ

10-ը հոկտեմբերի, 2022թ.